ելուած սրտի և յաւժարութիւն ոգւոյ՝ շարադրութեան առնել յետ քաջ քարտուղարացն. սակայն նոցայն պատմութիւն է և ոչ գովութիւն։ Եւ հաւատամ թէ որ ընկալաւ զնոցա տաղանդն՝ ոչ առնէ անտես և զմեր խերևէշս զոր պատշաճ վարկաք՝ անտեղի գոլ՝ ոչ տալ շնորհս շնորհողին՝ և ոչ գոհանալ զանեզրական պարգևէն՝ որ աբաւ եկեղեցւոյ միջնորդութեամբ սորա։

Բայց տեղերիմ ի յոմ կարգիս. որո՞ւմ ուղղեկցիլ՝ ներքնոց թէ արտաքնոց՝ հոգևորո՞ւս թէ մարմնաւորին. և ի ճահ վարկանիմ համայնիւ յարմարել զշինուած հոմերական տաղիս. որքան և ընձեռէ մեզ իմաստութիւն՝ իմաստն՝ և բանն՝ բան՝ և հոգին՝ հոգի. զի ծանեայց թէ ո՞րգոն հաւացայցա ի սեռէն կամ ի վայրէն՝ յիրէ՞ն թէ յարհեստէն։ Քանզի գովելի և գեղեցիկ են համայն և յոլովից ըղձալի և տարփալի։ Եւ զի թէ միոմն միայն էր բարգաւաճնալ՝ բաւական էր ընդարմացուցանել զբնաւս և գերազանցել քան զիմաստս իմաստից անմարմնոց և մարմնականաց։ Եւ արդ՝ յապուշ կրթեալ իմ՝ անդիտանալով զորոյ բուռն հարկանել ի քառիցս. զի վե-

---

ա. Անսովոր եւ անհասկանալի բառ է։ Ձեռ. մէջ ընդգծած է՝ երեւում է հնումն էլ չեն հասկացել։